

# ՎԾՏԻ ԽՈՍՔ

Ընդամենը մեկ տարի չի անցել, երբ ողջ հայ ժողովուրդը ամենուրեք, Հայրենիքում թե սփյուռքում, մի առանձին շուքով նշեց Ամենայն Հայոց Հայրապետ, Նորին Սուրբ Օծություն Վազգեն Առաջին Կաթողիկոսի ծննդյան 85-ամյակը:

Մեր մտապատկերում դեռևս թարմ են Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պատվավոր անդամ Վազգեն Առաջին Կաթողիկոսի՝ հպարտությամբ լի թևավոր խոսքերն այն մասին, որ մեր ակադեմիան և հայ գիտությունն իր նվաճումներով չպետք է զիջի համամարդկային գիտության մակարդակը:

Սակայն այսօր այլևս մեզ հետ չէ Վեհափառ Հայրը:

Երեսունհինը տարի առաջ, երբ Վազգեն Առաջինն ընտրվեց Ամենայն Հայոց Կաթողիկոս, համայն հայության համար մեծ ուրախություն էր նրան տեսնել Սուրբ Էջմիածնի կամարների տակ, հավատացած, որ Մայր Աթոռը և Հայոց Եկեղեցին մեկուսացված, անշուք վիճակից բարձրանալու են համաշխարհային ճանաչման աստիճանի:

Կաթողիկոսական գահակալության անցած տարիների ընթացքում հայ ժողովուրդն ականատես դարձավ Վեհափառ Հոր անմնացորդ նվիրվածությանը՝ ի սեր Աստծո, ի սեր Հայրենիքի և ի սեր Ազգի:

Մեծ վշտի այս օրերին, Վեհափառին վերջին հարգանքները մատուցելիս, ի սրտե կարող ենք ասել. ազգովին հպարտ ենք մեր սիրելի Հայրապետով, ազգովին երախտապարտ ենք նրան՝ ժողովրդի նկատմամբ ունեցած իր մեծ սիրո և նվիրվածության համար:

Ամենայն Հայոց Կաթողիկոսին սովորաբար կոչում էին Ծինարար և չէին սխալվում: Իրավամբ նա Հայ Եկեղեցու պատմության մեջ հանդես եկավ նաև որպես բացառիկ Ծինարար կաթողիկոս՝ գործելով բազում շինարարական և կառուցողական սխրանքներ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր ժողովրդին ներկայացավ նաև որպես խոշոր մտավորական և գիտական գործիչ: Բավական է նշել, որ վերջին վաթսուն տարիների ընթացքում նրա գրչի ուժով ստեղծվեցին շուրջ երկու հարյուր ամենատարբեր բնույթի և բովանդակության գիտական աշխատություններ և հարյուրավոր Հայրապետական կոնդակներ: Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան, բարձր գնահատելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի գիտական վաստակը, միաձայն նրան ընտրեց ակադեմիայի պատվավոր անդամ:

Մեզ բոլորիս բախտ է վիճակվել ակադեմիայի ժողովներում լսել Վեհափառի իմաստալից ելույթներն ու կանխատեսումներն ազգային գիտության զարգացման մեծ հեռանկարների ու ապագայի մասին:

Ես երկար տարիներ, գործի առումով, սերտ կապերի մեջ եմ եղել Վեհափառի հետ և միշտ զգացել նրա մեծ շահագրգռվածությունը ժողովրդի կյանքի, զարգացման խնդրում, հետաքրքրությունը հանրապետությանը հուզող, նրա առաջընթացն ապահովող պրոբլեմների նկատմամբ:

Խորին համոզմունքով կարող ենք ասել, որ Վեհափառը մեր օրերում Հայոց պատմության ձայնն էր, և ամեն տեղ, ամեն պարագայում, երբ այն հնչում էր, մենք զգում էինք մեր ժողովրդի հազարամյա պատմության արձագանքը: Այդ ձայնը որպես անտեսանելի մի կամուրջ Հայոց հին դարերը կապում էր մեր ժամանակի հետ, մեզանից յուրաքանչյուրի հետ:

**ՖԱԴԵՅ ՍԱՐԳՍՅԱՆ**
**ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ**